

ԿՐՈՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

(Շարժ. նախորդ քիտիկ եւ վերջ)

Անդրադարձաբար երեք բաներ կը պատկանին Գրիստոնէի մը՝ ըստ Սուրբ Գրոց. ասոնք են՝ փրկութիւն, նուերագործութիւն, եւ ծառայութիւն: Վերածնութիւնը՝ որ բնութեան եւ նկարագրի այլակերպութիւնն է, Գրիստոսի ընդհանուր պատմանն է փրկութեան համար: «Եթէ մարդ վերստին չծնանի, չկրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը»: Այս նոր հոգեւոր բնութեան պարզութիւնը կ'ընէ ուղիղ կենցաղա- վարութիւն մը ոչ միայն կարելի, այլ եւ հարկաւոր եւ անհրաժեշտ բոլոր անոնց համար որոնք իրաւամբ փրկուած են: Փրկութեան ի հարկէ կը յաջորդէ նուերագործութիւնը — իբրեւ էական պայման: Եւ փրկութիւնը եւ նուերագործութիւնը ունին իբրեւ բարձր նպատակակէտ՝ քրիստոնէական ծառայութիւնը:

Ճշմարիտ կրօնը չէ ուրիշ բան բաց միայն գործնական ուղղութիւն կեանքի գործառնութեանց մէջ, եւ կատարեալ ճշմարտութիւն իրաւորաց սահմանին մէջ: Ան որ կը սիրէ զԱստուած իւր բոլոր սրտովը՝ չի փնտռեր ինչ որ հոգեւոր հասարակաց աչքը իւր վրայ է: Նա ամեն տեղ եւ միշտ կը զգայ անհուն ներկայութիւնը, անհուն սրբութիւնը, իւր խնդր միշտ փափուկ է եւ միշտ զարգացման ճամբուն մէջ: Կրօնը — Աստուածային կեանքի մարդու հոգեւոր մէջ — աւելի լաւ կերպով կը հասկցուի այն փրկութեան ժամանակ որ կը նկատէ ամեն կեանք աստուածային: Մարդ էակը չէ նուազ- տացած ժառանգական մեղքերով, այլ ընդունակ է անձնական բարձրացման եւ կատարելութեան: Բարեշնչութեան վարդապետութիւնը իւր արժանատիան ձեւին սակ է այն վարդապետութիւնը ինչ որ Աստուծոյ բոլոր կրօնակները որ- չափ որ ծանօթ են մեզ՝ են անմահ եւ զարգացման եղանակներ: Եւ ոչ թէ յորինելու կամ ձեռնարկելու եղանակներ: Աստուած ընտրած է որ յառաջդիմութիւն մ'ըլլայ փրկութեան զէ- սի գործութիւն՝ իւր բոլոր արարածոց մէջ: Մարդու հոգեւոր ինչպէս նաեւ անոր մարմնաւոր բնութիւնը բացառութիւն մը չէ այս ընդ- նանուր օրէնքին: Անոր հոգեւոր կարողութիւն- ները աստիճան առ աստիճան կը զարգանան այն ամենանախնական վիճակէն յորում զգայականը կ'իշխէ, այն ամենաբարձր վիճակէն յորում զգայականը կ'իշխէ այն ամենաբարձր վիճակէն յորում հոգեւորը կը սիրէ Գրիստոս սահմանած է զործուող համար ողջ եւ անաշխարհի կեանք մը, որուն յարիւր կը զարգացնէ նկարագիրը, եւ կ'ընդլայնէ «չունչ կենդանութեան» հոգեւոր զանազանը: Սոյն կեանքը ամբողջութեամբ կը զբա- նենք սիրոյ ընդհանուր օրէնքին մէջ — սէր Աստուծոյ եւ սէր մարդկան — եւ որ բարեխառ- նուած է ներքին յուսով կամ գիտութեան շնորհ- քով, որ կը ներկայացուի սիրով չօրմէ մը՝ որ կ'ընդունի իւր զարգացումը եւ սխալակերպ- զանազանը զղլումը եւ անկեղծութիւն կա- տարեալ հազարամեակներ անց: Այսպէս նոր կտակարանին օրէնքն զէմ է վրէժատէր եւ սխա- կալ պատիժի մը: Բայց անկեղ զէմ չէ փոխա- րինելու արգար հասուցում մը անոնց՝ որ կը սիրեն զործել անիւրաւութիւն:

Բայց պէտք չէ մոռնալ թէ շնորհաց վար- դապետութիւններ են այն արժանուոր յորմէ կ'ա- ճին Գրիստոնէական կեանք պարտականութիւն- ները: Հոգեւոր պատգամ է սէր, խնդրութիւն, խաղաղութիւն, կրկնյամբութիւն, քաղցրու- թիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հե- ղութիւն, մոռնալութիւն այսպիսի բաներու զէմ օրէնքն էլ այս:»

Մէկ կտորով՝ Գրիստոնէութիւնը նոր նպատակած այն կեանք մըն է, այն կեանքի ներ- շնչունն եղած է այն հաստատութիւն Յիսուս Քրի- յոստուէ աշխարհի փրկիչը եւ թէ իւր փակե- լու կարողութիւնը եւ կատարելու իշխանու- թիւնը հաստատուած են իւր կեանքովը, իւր վարդապետութեամբը, եւ իւր յարութեամբը: Այս հաւատքն է, այն կեանքի զարգացումը կը բղի իւր փորձառութիւն մը՝ զոր կարելի չէ սահմանել նախապատմութեամբ մը: Իբրեւ, ա- նկեղ կը գերազանցէ բոլոր սահմանումները: Անկեղ բարեխառնութեան եւ ընկերակցութեան փորձառութիւն մըն է Աստուծոյ նաեւ, եւ հիմ- նուած է վստի վրայ: Անկեղ նոր փորձառու- թիւն մըն է որ կը կրէ իւր մէջ եղբայրակցու- թեան ողի մը հանգիստ մարդկութեան: Ինչպէս կը պատկանի ուրիշ մը հանգստեան ու բարոյնը կը շարժէ կը շահագործէ զմեզ: Եւ ինչպէս Քո- ռաճ իրաւամբ կ'ընէ, «Ինչ նազով բացի չի հանդիպած» մենք մարմնակերպ եւ Գրիստոնէա- յիներ էինք: Հիմա մենք ամենքս ալ մարդկե- կեւ Աստուծոյ զաւակներ ենք: Անկեղ նոր փոր- ձառութիւն մըն է անձնութեան, պատուաբ- րութեան, յուսոյ եւ բազմաւանց, — փորձա-

առութիւն մըն որ մէկ կողմէն չի կրնար հոգաց- ունիլ այս կեանքով, եւ ոչ ալ, միւս կողմէն չի ընդունիլ մահով: Անկեղ անմահութեան նոր փորձառութիւն մը, եւ նոր ըմբռնումն կեանքի արժեքին՝ իբրեւ պատմութիւն զարգացման եւ օգտակարութեան, եւ կեանքի գործութեան՝ իբ- րեւ յաղթող մահուան վրայ:

Այս փորձառութիւնը՝ չիսկի է, որ՝ բոլոր- լովին միակ չէ իր տեսակին մէջ: Բան մը որ քիչ շատ կը նմանի ասոր՝ կը գտնուի Հին Կտա- կարանի Սուրբերուն փորձառութեանց մէջ: Նաեւ հեթանոսացի ամենամտաբար եւ ամենալա- բարոյականի ուսուցիչներուն մէջ: Բայց Գրիս- տոնէական փորձառութիւնը կը փայլի անպիսի աստուածութեամբ որ անկեղ հիմնականայեւ եւ իսկպէս նոր կրնայ համարուի: Գրիստո- նէական ողի կը կապէ մարդ Աստուծոյ նաեւ սերտ յարաբերութեամբ մը, եւ նոր կեանք մը յառաջ կուգայ ամէկ որ առաջ թէկե բոլորու- վին անհեղանջ էր բայց ցուրտ եւ սահմանա- չէր:

Այս փորձառութեան անհաւաք Գրիստոնէա- կան զաւանուութիւնը որ իւր ամենապարզ ձեւին սակ կը սորվեցնէ թէ Աստուած բարի է, եւ կը սիրէ իւր զաւակները, եւ կը փափաքէ որ անոնք սուր եւ կրկնակ ըլլան, եւ թէ նա պիտի օգնէ անոնց սուր եւ կրկնակ ըլլա- լուն եթէ անոնք թողուն որ անկեղ ընէ այն- պէս:

Գրիստոնէական բոլոր վարդապետութիւն- ները են փորձեր բացատրելու համար թէ Աս- տուած Յիսուս Գրիստոսով աշխարհ եկաւ, եւ թէ մարդ կրնայ գալ Աստուծոյ Յիսուս Գրիստոսի միջոցաւ, եւ թէ մարդ կը գտնէ նոր հաւատոյ մը փորձառութիւնը, նոր յուսոյ մը ներշնչու- մը, եւ նոր սիրոյ մը ստեղծումը: «Որոնք որ ընկալան զնա, իշխանութիւն տուաւ անոնց լինելու որդիք Աստուծոյ:» Աղեք. 9 Սեպտ. 1902

ՏՕԳԹ. Ս. Վ. Ե. ԶԵՆԻՒՆԵԱՆ

ՀԱՅ ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԳՈՐԴՈՐԳ ԵՐՁԱՆԸ

Հայ Անետարանական երկեսու վարժա- րանաց Զորքորդ տարեշնչանք պիտի սկսի ա- ռաշխկայ Հոկտեմբեր 1 (Ն.Տ.) նորնոր կազմակերպութիւններով եւ բարեփոխում- ներով:

Անդ. լեզուն ըստ առաջնումն պիտի աւանդուի անդլիացի ուսուցիչներու կող- մէ: Իսկ Արարելէն լեզուն այս տարի նոր կարգադրութեան մը համաձայն պիտի ա- լանդուի կառավարական վարժարանի ու- սուցիչներէն միոյն կողմէ:

Փափաքուց պիտի աւանդուի նաև «Գաղնիկ» խիտ յաղողակ անդլիացի ու- սուցիչուհի մը կողմէ:

Նոր աշակերտ արձանագրելու ուղղ ծը- նողքը կրնան զիմել ամէն օր կէս օրէ առաջ ժամը 10-12 Հայ Անետարանական վարժա- րանը ի Տալուտիէ, ուր պիտի գտնուի երկ- ակու վարժարանաց Հիմնադիր-Տնօրէնը:

րոսեանի, եւ անշուշտ դատավարութեան մէջ երևան պիտի գան:

Հոս առիթն է ուրեմն յիշատակել միան- գամ ընդմիջտ գոհացնելու համար կարգ մը հետաքրքիրներ ալ, թէ՛ անցեալ տարւոյ դեկտ. ամսուն մէջ ալ Տ. Թորոսեան եւ կեղեցւոյ շրջափակին մէջ յարձակում մը կրած էր, սակայն հակառակ ազգային բու- լոր շրջանակներուն կողմէ եղած ամօթա- բեր պաշտպանութեան, հակառակ ծամա- ծուս վկայութեանց, հակառակ այս ու այն կողմերէ հազար տեսակ մարտնչականութիւ- ներով յանձնարարականներ փոխադրուե- լուն, յանցաւորը պատժուեցաւ տուգանքի դատապարտութեամբ՝ նախնական դատարանի կողմէ, եւ այդ վճիռը վերաքննութեան ա- տենին մէջ վերահաստատուելով:

Այս անգամ ալ չենք յուսար որ Տիար Ե. Թորոսեան թողլ տայ իր լրագրագետի համեստութեան, որպէս զի այս ու ան, իր պաշտօնին գիտակցութիւնը չարաչար գոր- ծածելու յանդգնին եւ անպատճառ պիտի պատժել տայ յանցաւորը օրէնքի եւ մարդ- կութեան սահմանած տրամադրութիւննե- րով:

ՀՈՒՆԵԱՆՆԵՐ

Մեր անցեալ թուով հրատարակած Մեծ Տիար Արշակ Աճեմեանի իր հանգուց- եալ Տիկնոյ ջառանգործակին առթիւ Ս. մինաս մատրան մէջ կատարելի հոգեհան- զբառեան թուականը, որ խաչվերացի եր- կուչաբժի օրումն թուականը 16/29 Սեպ- տեմբեր պիտի ըլլար, սխալմամբ 15/28 Սեպտեմբեր նշանակուած է:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր և Տիկին Մ. Կարապետ Սէմերճեան և զաւակունք. Տէր և Տիկին Ստեփաննոս Սէմերճեան և զաւակունք. Այրի Տիկին Մարիցա Ս. Ուռեան. Տէր և Տիկին Դա- լիթ Ս. Ուռեան և Տիկին Մարի Սարափեան, Արշալոյսի միջոցաւ իրենց անհուն շնոր- հակալքք կը յայտնեն այն ամեն արգա- կանաց և բարեկամաց, որոնք ամսոյս 13/25 Հինգշաբթի օրը հաճեցան ներկայ գտնուիլ:

ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՒԵՐՃԵԱՆԻ

յուզարկաւորութեան տխուր արարողու- թեանց, եւ իրենց համակրութիւնն ու յա- ւակցութիւնը յայտնեցին այս սգազգեցիկ առթիւ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

— Բազաքիս ունուանի ատամնաբոյժինե- ըն Տիար Խ. Տէմիրճեան՝ որ ժամանակ մը ի վեր վերին Սգիլորտոս կը գտնուէր, անց- եալ օր ջաղաքս վերադարձաւ և Օթէլ Եւ- բրթիսին գիմացի իր նախկին աշխատնոցին մէջ դարձեալ ըստ առաջնումն կ'ընդունի իր յաճախորդները:

ԱՐԱՔՍ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ. — Երեքշաբ- թի երեկոյ Արագս Նուագախումբը Ընդհ. ժողով զուամբած էր Դաւիթ Լեւոնիայի ներքնարարին մէջ, որ կարծես յատկա- պէս ժողովներու և գուսարուսներու համար պատրաստուած չէր մ'է, իր ամէն յարմա- բութիւններով:

Նուագախումբի անդաւր թուով 19-20 ներկայ էին: Օրովարդն էր դասատու մը ունենալու խնդրը և գործիչներուն գնումը: Անդամներն ումանք հայտնի փութկու- տութեամբ մը կը փափաքէին որ այժմէն իսկ գործիները բերել տրուին և դասա-

առութիւններ սկսին: Առ այս ձայնագրա- գէտ դասատու մ'ալ իր պայմանները ներ- կայացուցած էր Գործադիր Ժողովին:

Վիճարանութեան ընթացքին մէջ, ան- դամներէն մէկը, իր խօսքը Դիւանի Ատե- նապետին ուղղելով հարցուց թէ՛ քանի՞ ոսկի պատրաստ գրամ ունին, առաջադր- եալ ծախսերը գողելու համար: Գործադիր Ժողովի կողմէ Ատենապետին միջոցաւ տրու- ուած պատասխանին վրայ թէ՛ գեւ հազիւ 16 ոսկի պատրաստ կայ, հարցապնդող ան- դամը յայտարարեց որ ըստ թուին անհամա- մատական պիտի ըլլայ ձեռնարկել այնպիսի ծախքերու, որոնք գննէ 80-100 ոսկի կը կարօտին, հետեւաբար առաջարկեց որ եթէ իր ընկերները կ'ընդունին, Ընկերութիւնը ժամանակ մը եւ թող յետագէ գործիչներու գնումը և դասատուի խնդրը, մինչեւ որ գննէ իրենց պէտք եղած գումարին կէսը պատրաստ ունենան:

Ատենապետը այս առաջարկը ջուրէի գրաւ և մեծամասնութիւնը ընդունելով, Օրակարգին՝ ցնոր սնորհութիւն յետա- ձգումը որոշուեցաւ:

Առիթն է որ յիշեցնենք «Արաքս» նը- աւագախումբի Պատ. Դիւանին թէ՛ երբ Ընդհ. ժողով կը գումարեն, անհրաժեշտ է որ մեկտեղ ունենան իրենց արձանագրութեան տետրակներն, որուն մէջ ներկայ անդամք իրենց ստորագրութիւնները գննէ վերէ, եղած որոշումներն ալ կ'արձանագրուին ան- միջպէս և կը վաւերացուին ներկաներէն:

Թէպէտեւ կատարելութեան հասած ընկերութիւն մը չէ տակաւին Արաքսը, այս մանրամասնութեանց ուշադրութեան դարձնելու չափ, բայց հաստատուն հիմ- քով վրայ գրուած ձեռնարկ մը երբեք քայ- քայլու երկուք չ'պատճառուի ո՛ր եւ է մէ- կուն:

Մենք իրենց յարատուութիւն և յա- շնութիւն կը մաղթենք, զիմաղով նրի- րենց ըրածը կարեւոր ձեռնարկ մ'է և կը համապատասխան իրենց ունեցած եռան- գին:

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ Ն Ե Ր

Համաճարակը աւանց իր տխուր հեա- քերը թողու չ'անցնիլը դժբաղդաբար հայե- թուս համար ալ:

Մենք ունեցանք Գահիրէի և Աղէք- սանդրիոյ մէջ մահեր, որոնք շատ մը սիր- տեր խնչւցանող հանգամանք ունեին:

Մէկ երկու օր առաջ ալ Միթ-Կամ- ըն Սեպտ. 22 թուականաւ ստացանք նա- մակ մը, որ կը գուժէր մահը Ազիւ Տի- կին Նուսուֆար Կ. Սարափեանի և իր զըս- տեր նորածնակի հորս Տիկին Աղաւնիին:

Ասոնց մահոճան պարագաները շատ սրտաճմրկ են. այնպէս որ Մայր եւ Դուս- տրը գրեթէ միեւնոյն օրուան մէջ զոհ կ'եր- թան մահուան սայրաստուր մանգաղին:

Տիար Գրիգոր Սարափեան ծանօթ գեղա- գործը, որ իր արհեստին մէջ ունեցած ճըմ- տութեամբ բաւական կարեւոր դերք մը գրաւելու կոչուած էր, թէ Պոլսի և թէ հոս անշուշտ պիտի կարենայ համբերել այս ծա- նըր հարուածին, որովհետեւ իր մայրազուրկ եւ որ արածած փոքրիկները դեռ շատ պէտք ունին իր խնամոց:

Մենք երկնային միթիթարութիւնը կը հայցենք այրեցեալ և որդեկորոյս Տիար Գրիգոր Սարափեանի, որուն, կ'զգանք շատ պէտք ունի:

— Հայ մը եւս կը կորսնցունենք. հայ մը դերքի տէր, բանբար, գործունեայ, հեղաբարդ եւ ընկերասէր:

Տիար Յովհաննէս Սէմերճեանն է այն, որ յիտանալեալ հասակին մէջ, երկարատեւ հիւանդութենէ մը յետոյ՝ կերթայ հանգչիլ իր մօր — հողին — ծոցը:

Տիար Սէմերճեան անկարեւոր դէմք մը չէր. ամէն ընկերային օգտակար ձեռ- նարկներու մէջ իր անուրը գտնել կարելի է: Չէզոք ապրած է միշտ, աւանց հեռի մնալու բարեգործելէ՝ միայն չէր պիտր-

ԿԱՐՊԱԼ

Կարգ թուով Տիար Վարդան ձիւղէճեա- նի, (Իսրայէլ) Կարան-Ընթերցատան մէջ անցեալ կիրակի օրուան արտասանած ճա- րը, «Ինչու ես մնացած եմք վերնադրով, որուն հրատարակութիւնը խնդրած է Լա- րան-Ընթերցատան վարչութիւնը:

ՅԱՆԿԱՐԿԱԿԻ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՄԸ

Երէկ չէ առաջի օրը, 25 Սեպտեմբեր կէս օրէ յետոյ ժամը 3 ի միջոցներ, «Ար- շալոյս» Տնօրէն Տ. Ե. Թորոսեան Գաֆէ Շիշի մէջ «Արեւելք» լրագիրը կարգաւոր զբաղած պահուէ, Առաքել Փափաքեան ա- նունով եղբայրահայրուն ծաւօթ մէկը յ- յանդգնած է յանկարծակի վրան յարձա- կել ու աստակ մը զարնելու նպատակաւ, ինչպէս ինք յայտարարած է, որուն համար Տիար Ե. Թորոսեան դատի հրաւիրած է զայն:

Այս յարձակումին շարժառիթները բու- ըրովին անձանօթ մնացած են Տ. Ե. Թոր-

Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԸՆԿ.

Գ.Ա.Ն.Ի.Բ.Է. (ԵԳԻՊՏՈՍ)

Քեր որ իր բարեգործութիւնները հռչակուէին ի ձայն փողոյ և թճախի. համեստութիւն մը, որ կրնայ մանկչակի համեստութեանը հետ բաղդատուել:

Հանգուցեալ Յ. Սէմէրճեան յոճախ ձեռնարկ գտնուած է նաև Արշալոյսին ոչ թէ բարեկամական ազդեցութիւններէ թելադրուած, այլ պարզապէս յառաջդիմութիւնը սիրելուն համար, եւ որ մը բաժնէ մէկ երկու բարեկամներու առջեւ, Այլ շատ կը սիրուի կոր Արշալոյսը. եգիպտոս անոր նման թերթ մը չունեցաւ և երբէք ալ չպիտի տի ունենայ, եթէ այդ վերջինին ձեռնարկները Բարեկէն ալ գալու ըլլան:

Մեզի ինքնաբերաբար համակրող եւ այսպիսի ուղղամտ բարեկամի մը մահուան առջեւ անտարբեր չենք կրնար դռնուել, եւ տխրութեամբ համակուած, մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք հանգուցեալ Տիար Յ. Սէմէրճեանի ազգականացի ու համակրողացի:

Ա.Չ.Գ.Ա.Ր.Ա.Ր.Ո.Ի.Թ.Ի.Ի.Ն

Վարժ գրաչարի մը պէտքը կայ, գրահարուցիչ ամսականով. դիմել Արշալոյսի խմբագրութեան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԽՈՐԸՐԿԱՒՈՐ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Պոնտաթիւնի կուսիկն ապանորիւնը. — Անտորոյիկն. — Կոմստեմիկն մերսալալուրը. — Բարեկէն 16 Սեպտեմբեր թուականաւ կը հեռագրեն. Պոլսոյնը և ամբողջ Իտալիոյ մէջ օրտան խնդիրն է զանազան տեսակետով խորհրդաւոր սպանութիւն մը որ դարձուցաւ Պոլսոյնի բարձր դասուն մէջ:

Իտալիոյ նշանաւոր բժիշկներէն Մուրի Բրօֆէսօրին փետան՝ Պոնտաթիւնի կոմսը սպանուած գտնուած է իր տանը մէջ՝ բանի մը տեղէն գաղտնի հարուածներով վիրաւորուած:

Ստիկանութիւնը խաւարկուելուն կը կատարեն, երբ Մուրի Բրօֆէսօրը ծանոյց հարցաքննիչ դատաւորին թէ՛ իր տղան փաստաբան Թուլիօ, հեղինակն է այդ ոճիւն. Բրօֆէսօրը միեւնոյն ատեն հարցաքննիչ դատաւորին յանձնեց նամակ մը, ուր յայտարար, որ արտասահման գալած է, կը պատմէ ոճիւն գլխաւոր պարագաները:

Թուլիօ Մուրի իր քեռայրին՝ Պոնտաթիւնի կոմսին ներկայացրի է՝ դիտողութիւններ ընելու անոր ընթացքին նկատմամբ իր քրոջ՝ այսինքն Պոնտաթիւնի կնոջը հանդէպ:

Վիճարանութիւնը սաստկանալով կոմսի փոխուել է զէնքով և արդիւնքը մահացու եղեր է կոմսին համար:

Դժբաղդաբար այն տեսակ պարագաներ կան զորս կարելի չէ հաշտեցնել տրբուած այդ մեկնութեան:

Պոնտաթիւնի տունէն բաւական արժեթիւղի մը անհետացեր են. միւս կողմէ գիւսիկն քով գտնուել են ուղեւորի պայուսակ մը և պանքոմսերոց պարագայ թղթապանակ մը, որ կնոջ մը նամակը կը պարունակէր՝ ժամագրութիւն մը սահմանող, ինչ որ կապացուցանէ թէ՛ ինչոքը նախապէս կարծուածէն շատ աւելի կնճուտ է՝ ոստիկանութիւնը քննութիւն կատարելէ ետքը բաւական մարդ ձերբակալեց, ինչպէս նաև Պոնտաթիւնի կոմսուհին, զորհին կինը, իբրև մեղաւոր սպանութեան և գողութեան:

ԳԻՐՄԱՆՈՒ

Փոքրնալ-սի-Գեոի մէջ հետեւեալը կը կարգանք:

Ն. Վ. Գերմանիոյ կայսրը, վերջերս Բիէլի մէջ տեսակցութեան մը համար հրաւիրած է Ղազի Մուխթար փայան, որ Քօբէնհակ հասնելէ վերջ՝ անձնական տկարութեան պատճառաւ տունը մնալու ստիպուած ըլլալով չէ կրցած պատասխանել եղած հարաւերին:

Մուխթար փաշա որոշած է շաբաթի մը շափ Քօբէնհակ մնալ և անտի Բարիզ մեկնել, ուրկէ հոկտ. 15ին եգիպտոս պիտի վերադառնայ:

Սուտանի ընդհանուր քննիչը, Սլաթին փաշա, մէկ քանի օրէն քննական պտոյտ կատարելու համար Սուտան պիտի մեկնի:

ԹՈՒՐԻԹՈՒ

Թուրք կառավարութիւնը ոչ միայն Խտիվական ընկերութեան Իւստալիյի անուն նախն Գլազօմենէն անցքը մերժած է, այլ և նաւապետին սպառնացած է բռնի ուժ գործածել, եթէ այս վերջինը անկիւպէս չի հեռանայ նաւահանգիստէն:

Նաւապետը այս սպառնալեաց կարկուտին առջեւ թէեւ հեռագրած էր Ընկերութեան պէտք եղած հրահանգները բաւանալու համար, սակայն Թուրք պատերազմական նաւու մը ներկայութիւնը ստիպած է զայն խոչնդարար թողուլ նաւահանգիստը և Աղբքանգրիա ուղղուել:

Իւստալիյի նաւը Զիւնուիոյ եւ Պօլսոյ համար կարեւոր բեռներ ունի եղեր և Խտիվական ընկերութիւնը պատասխանատու կը բռնէ Թուրք կառավարութիւնը, եղած ահազին փաստաց համար:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի օր «Առշիւն» շրջանաւոր նաբօրէին Աղբքանգրիա հասան 119 Իտալական զօրքեր, որոնք Մասալի կ'երթային. ասոնց թոյլ շարունակեցաւ ցամաք ելլելու և միեւնոյն շրջանաւոր երեքըթի օրը իրենց ուղին շարունակեցին:

Տաիրա խաւարա Խոսիվալի «Պէհեր» անուն շրջանաւոր անցեալ օր Սուէզ հասաւ Սուրս քր Մօիզ անուն տեղւոյն մէջ օրինական բարանութիւն լրացնելէ յետոյ:

Այս նաւը որ Հիճազէն կուգար, գէպի Պէրութ և Պօլսոյ մեկնեցաւ՝ բազմաթիւ յետաձեռն ուղևորներով:

Նախարարական որոշման համաձայն, եգիպտոսի Իտալական կայսերական վարժարանաց դասընթացքին սկզբնաւորութիւնը հոկտ. 15ին յետաձգուած է:

Ռուսական Ռէն Օլիւս անուն նաւը որ Օտեսաէն Պօլսո հանդիպելով Երկուշաբթի երեկոյ Աղբքանգրիա հասած է, 24 ժամուան քարանթիւն սպասած է:

Ռէն Օլիւս նաւը արդէն 10 օրուան քարանթիւն մ'ալ Կ. Պօլսոյ ժամատարէ վարակեալ հոչակուած նաւահանգիստը ըսպասած է Օտեսալէն հասած ըլլալուն համար, որ նոյնպէս վարակեալ է:

ԳԱՀԻՐԷ

Համաճարակին ընթացքը Գահիրէի մէջ:

Սեպտ.	1	20	գէպք	20	մահ
»	14	13	»	13	»
»	15	18	»	12	»
»	16	14	»	17	»
»	17	18	»	12	»
»	18	14	»	16	»
»	19	17	»	15	»
»	20	21	»	18	»
»	21	11	»	12	»
»	22	15	»	13	»
»	23	15	»	11	»

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐԵՎԼՈՅԻ ՄԻՍԻՍՏԵՆԵՐՈՒ ԵՒ ԵԳԻՊՏԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻՆԵՐՈՒ Յակապետ պատրաստած մտաշէն սիկարներ

ԳՐԻՄԱՆ ԵՒ ԳԼԽԱՎՈՐ ԵՊԵՐԱՆՈՅ Հետազոտական Հասցի. — ՓԷՄՊԵՃԵԱՆ. — Խեթիօն Թիւ 689.

ՀԻՆ ԶԱԳՐԻՅԻ ԴԻՄԱՑ Կամակասույի Թիւ 129

Պ. ՅՈՎ ՍԵՓԵԱՆ

Tourists' Stores ESTABLISHED 1885

ՄԹԵՐԱՆՈՅ ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ԱՆԳՂՍԱԿԱՆ ԱՊՐԱՆԱՅ Պապ-էյ-հասիս Փողոց Տիգրան փաշայի սան դիւնքը ԳԱՀԻՐԷ

Անտուան կոշիկներ ամեն գոյներու վրայ գոյգը 15 դնկն. Ե միկն 40 դնկն. Ձմառուան կոշիկներ գոյգը 35—100 դնկն Խրախանջիւր գոյգ կոշիկ երաշխաւորեալ շաւազոյն կաշիէ թղլալու:

Փեղոյներ, պրակեթներ, Ածելիներ, Անգլ. վրձիկներ ամեն տեսակ, ծածկոցներ, բուսիքի կաշաւեալ պեխեր, որսորդութեան կաշաւեալներ, ճարտարութեան ամեն տեսակ սնուկներ, Անգլ. գորտոր կաշիէ պայտասկներ (Gladstone). ալ իր ալ ճեմերէնտորք-մօնեներ. նեծեղակի պեխեր. Ճուր սոյներ. զմեղիներ եղև. եղև:



ՄԷԿ ԳԻՆ ԵՒ ԿԱՆԻԿ

»	24	18	»	16	»
»	25	13	»	13	»
26	13	13	»	13	»

Համագումար 1409 գէպք, 1279 մահ, 111 առողջացած:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Համաճարակին ընթացքը Աղբքանգրիոյ մէջ:

Սեպտ.	1	6	գէպք	5	մահ
»	14	36	»	33	»
»	15	40	»	31	»
»	16	40	»	35	»
»	17	34	»	24	»
»	18	31	»	32	»
»	19	31	»	24	»
»	20	35	»	29	»
»	21	41	»	32	»
»	22	28	»	24	»
»	23	36	»	23	»
»	24	25	»	26	»
»	25	36	»	23	»
»	27	20	»	17	»

Համագումար 802 գէպք 644 մահ 62 առողջացած:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պիւխէյ 22 Սեպտ. — Պեշիպաչի քաղաքինը քաղաքը այսօր կասարուցաւ:

Էօքօրս քաղաքը իշխանուելի Սրբ. Էսկիին արգիլեց իր մօր յուարկատրութեան ներկայ գտնուելու:

Մօնթելի 22 Սեպտ. — ՄԵՏԻՔԵՐԱՆԵՆԵՆ՝ օղապարիկը, իր մէջ ունենալով Վոյսի իշխանը, այսօր Փարսիսի ծովեզերէն մեկնեցաւ, միջերկրականի հանդիպակց կողմը անցնիչ փորձելու համար:

Կ. Պոլս 23 Սեպտ. — Իսա Պոլճեթիկնազ, Ալպանիացիներէ հանուած Ռուս Ենրա-հիլպաստարանի դէմ հակառակ ուղղութեան մը թշուարոյր, աւերեց Միսրոնի մի մասը և Վիլիքիթի մէջ գտնուած երկարաւոր գիծը, որ հիմն գրաւուած է Միսրոնի մաս հեզնելով իրեն դէմ դրկուած թուր գործերու ներկայութիւնը:

Ինդիստանի 23 Սեպտ. — Պ. Բուզվէր վիրաւորական գործողութիւն մը ունեցաւ մալիս տունիկն պայտասիկ պատրաստու. Այս պայտար հեռուակն է այն ձմրակն գոր նախագահը կրեց Սեպտ. 2ի դէպի պանուկ:

Լոնտոն 23 Սեպտ. — Ընդհանուր կարծիք երապիտը մէջ սա է թէ, հակառակ րուսականի հրեաներուն օգնելու համար սերտութեանց փախախիւ, անհասանելիութիւնը որ այս նպատակաւ Ռուսական ուղղութեամբ ծանուցաւորելու անոց բերելու քննական արդիւնք մը հրեաներուն ի նպաստ. կը կարծուի թէ Ռուսական պիտի ընդդիմանայ սերտութեաներուն, որով միջամտութիւն իստի պիտի սան, ճիշդ այն պատճառներով որ միջամտելու արգիլեց և զայն ի նպաստ հրեաներուն:

Սեպ 24 Սեպտ. — Հարաւայիկն հողմերէն Հարաւուած թղլալով՝ Միջերկրականի անուն օղապարիկը, հարկարուցաւ ընդհանր իր ուղևորութիւնը և իստ կրակ ստաւ անվտանգ:

Ս. Փեթրոպոլս 24 Սեպտ. — Կոստանթնուպոլսի մէջ վախանալուած քաղաքականութիւնը մեկնաբանելով կ'ըսէ թէ՛ այս քաղաքականութեան վերջ մը պիտի սան պարսկաստանը այս կամ այն պետութեանց ազդեցութեան սակ ղնելու զապահարիկ, և թէ պարսկաստան այստեղեւէտ իր նաւը օտար սերտութեան մը ստորադասուելու թղլալ:

Լոնտոն 25 Սեպտ. — Մանուր շատ յուզուած է Պօետերու կոչիկն պարունակած «Ռօնօն» և անհասարակ կը ինչպիսի այս ձեռնարկը, որ Անգլիոյ դէմ հակառակութիւն հրախրելու քննարկն ունի:

Փիլիպս անուն ամերիկացի մը 100,000 տար հրախրեց Պօետերու ի նպաստ:

Ա Չ Դ

Երիտասարդ մը քաջամտ տոմարակալ և փորձառու՝ որ իր բոլոր պաշտօնավարած տեղերէն վկայեալ է, պատրաստ է այցելու հաշուակալի պայտաստ ստանձնել դիւրամապելի ամսամբաներով:

Դիմել Արշալոյսի Խմբագրութեան հասցէին:

Ա.Չ.Գ.Ա.Ր.Ա.Ր.Ո.Ի.Ն ԵՒ ԿԱՆԻՐՈՐԸ

Կը յիշեցնենք մեր յարգելի բաժանորդաց թէ՛ Երրորդ տարեշրջանը սկսած ենք: Կը խնդրենք ուրեմն մեր պարտաճանաչ բաժանորդներէն իրենց բաժանորդագրելու մեզ հասցնել և գոնէ այդ տեսակետով դիւրացնել մեր ձեռնարկը, որ արդէն բազմազանի դժուարութիւններ ունի իր մէջ, և նիւթականի պակասը շատ աւել կը ծանրացնէ ակնարկուած անհամար դժուարութիւնները:

